«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական գույքի կառավարման մասին» 2004 թվականի նոյեմբերի 20-ի ՀՕ-158-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) սահմանում է պետական մարմիններին ամրացված հանրակացարանային բնակելի տարածքների և ուսուցչի տների նվիրատվության և սեփականաշնորհման կարգը.»,

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 14 - 23-րդ կետերով.

«14) հաստատում է պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օգտագործման վիճակի մշտադիտարկումներ անցկացնելու կարգը.

15) հաստատում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու և գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու կարգը.

16) հաստատում է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերով հավաստված իրավունքները հավատարմագրային կառավարման հանձնելու կարգը.

17) հաստատում է պետական գույքի ընդհանուր օգտագործման տարածքների և պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու կարգը.

18) հաստատում է **պետական մասնակցությամբ առևտրային**

կազմակերպությունների լուծարման կարգը.

19) հաստատում է պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը.

20) կանոնակարգում է 100 տոկոս պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականության իրավունքով պատկանող գույքի օտարման գործընթացը.

21) հաստատում է պետական սեփականություն համարվող շարժական գույքը հետ վերցնելու և այլ մարմիններին ամրացնելու կամ հանձնելու կարգը.

22) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին պետական կառավարման համակարգի մարմինների և պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ոչ պետական սեփականություն համարվող տարածքների վարձակալությամբ ձեռքբերման կարգը.

23) հաստատում է պետական գույքի կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության անունից կնքված գործարքներով ստանձնած պարտավորությունների կատարման նկատմամբ հսկողության իրականացման կարգը։»։

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 23 - 25-րդ կետերով.

«23) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ իրականացնում է պետական սեփականություն համարվող շարժական գույքը հետ վերցնելու և այլ մարմիններին ամրացնելու կամ հանձնելու գործընթացը.

24) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ ընդունում է պետական սեփականություն համարվող գույքի վաճառքի մասին որոշում.

25) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով՝ իրականացնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին ոչ պետական սեփականություն համարվող տարածքների վարձակալությամբ ձեռքբերման գործընթացը»։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։